Բյուրեղավանցի էդգար Մարտիրոսյանը հուլիսի 22-31-ը Բուլղարիայի Կամչիա քաղաքում մասնակցել է «Միասին 21-րդ դարում» միջազգային ստեղծագործական հարդիպումներ փառատոնին, որտեղ մասնակցում էին ստեղծագործական խմբեր և անհատներ Ռուսաստանից, Բուլղարիայից, Վրաստանից, Մոլդովայից, Իտալիայից, Իսրայելից, Ռումինիայից, Ուկրաինայից և Հայաստանից: Մեր երկիրն առաջին անգամ այդ փառատոնում ներկայացրել է «Հայ լուսանկարիչների ասոցիացիայի» անդամ, լուսանկարիչ էդգար Մարտիրոսյանը: Արդեն 8-րդ տարին է կազմակերպվում է այս փառատոնը, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնելու իրենց երկիր: Լուսանկարիչ էդգար Մարտիրոսյանի առաջին անհատական ցուցահանդեսն է, որը լուսանկարչի խոսքով հնարավորություն էր արտերկրում ներկայանալու և իր աշխատանքները ցուցադրելու: Նա հանդես էր եկել «Իմ Հայաստան» խորագրով: «Ցուցահանդեսին ներկայացրել եմ 25 նկար, որոնց մեջ կային դիմանկարներ, եկեղեցիներ, խաչքար, ծիսական ավանդույթներ, լուսանկարներ նաև Բյուրեղավան քաղաքից: Ես ուզում էի պատմել մարդկանց իմ երկրի մասին. ինչքան շատ մարդ իմանա Հայաստանի մասին, այդքան ավելի լավ: Իրենց մոտ արվեստը գնահատվում է, և արվում է ամեն հնարավորը, որպեսզի արվեստը բարձր մակարդակի հասցվի և ներկայցվի հանրությանը: Ֆոտոն նույնպես իրենց հետաքրքրում է, մարդիկ սիրում են լուսանկարվել ու երբ ուզում ես նկարել, ոչ մի խոչընդոտ չկա, քեզնից չի պահանջվում ոչ մի ջանք»-ասում է լուսանկարիչը: Ըստ էդգարի՝ նման փառատոնները մեծ հարթակ են թե փորձի փոխանակման, թե նոր ստեղծագործական կապերի համար: էդգար Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց այն մարդկանց, ովքեր օգնեցին իրեն այս միջազգային փառատոնին մասնակցելու համար: Մինչև այսօր նրա լուսանկարները կախված են այն հյուրանոցի սրահում, որտեղ կազմակերպվել էր փառատոնը: Հիմա էդգարը մտածում է մեր երկրում անհատական ցուցահանդես բացելու մասին:

18.08.16.